ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Վրաստանի Խորհրդարանի պատվիրակությունը՝ Խորհրդարանի նախագահ Զուրաբ Ժվանիայի գլխավորությամբ: Մեծահարգ հյուրին ուղեկցում էին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Լևոն Խաչատրյանը, Հայաստանում Վրաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոլ Բարամիձեն, Կրոնի գործոց պետական խորհրդի նախագահ Լազար Սուջյանը, պաշտոնական այլ անձինք:

Վեհարանի ընդունելությունների սրահում պատվիրակությանը ընդունեց Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: Ջերմ զրույցի ընթացքում Վրաստանի Խորհրդարանի նախագահը կարևորեց եղբայր և դրացի ժողովուրդների սերտ գործակցությունը: Պրն. Ժվանիան հայտնեց, որ Վրաստանում բարձր են գնահատում Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի եկեղեցաշեն գործունեությունը և հաղորդեց Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի և Իլյա Բ Պատրիարքի ջերմագին ողջույնները:

Ողջունելով հյուրերին՝ Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը նշեց, որ հայերը և վրացիները Կովկասում քրիստոնյա երկու ազգեր են և պարտավոր են իրար թև ու թիկունք լինել: Սրբազան Հայրը հայտնեց, որ արտասահման հովվապետական այցելության մեկնած Վեհափառ Հայրապետը տեղյակ է այս այցելությանը և իր ողջույններն է հղում Վրաստանի ողջ պատվիրակությանը:

Ընդունելությունից հետո հյուրերը եղան Վեհարանի սրահներում, ծանոթացան այնտեղ պահվող մշակութային և հոգևոր արժեքներին: